ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

31 ՄԱՐՏԻ
2023 թ.
№ 3 (1101)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Մանկավարժական համալսարանի և կրթության ոլորտի կանա՛յք, սիրելի՛ մայրեր, քույրեր, աղջիկներ, շնորհավորում ենք բոլորիդ գարնանային փոքրերի կապակցությամբ

Հայաստանը դժվար օրեր է ապրում, մեզ բոլորիս պատուհասած պատերազմն անդառնալի կորուստներ բերեց: Թեև հետևանքների հաղթահարումը ծանր է ու դժվարին, պետք է կարողանանք համատեղ ելքեր գտնել:

Բոլորիդ մաղթում ենք հոգու և մտքի կորով, երջանկություն, սեր ու խաղաղություն:

Թող յուրաքանչյուր գարուն ձեզ աշխատելու, ստեղծագործելու, արարելու և նվիրվելու մեծագույն կամքով օժտի, իսկ աշխատանքային յուրաքանչյուր հաջողություն բերկրանքով լցնի ձեր հոգիները: Թող այս գարունը միայն խաղաղություն պարգևի ձեզ, կրթության լույսով լցնի յուրաքանչյուր հայ օջախ, որ ձեր հոգիներում մշտապես ծաղկաբույր գարուններ լինեն:

ԵՂԻՔԵ ՉԱՐԵՆՑ-126

Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ և ինքնուրույն,
Իմ օրերում ես ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն:

Իմ օրերում դժվար էր շատ լինել հաստատ ու մնայուն,-
Իմ օրերում պատմությունն էր յուրաքանչյուր բառիս նայում:

Իմ օրերում երգը միայն նրանո՛վ էր մեծ ու անգին,-
Որ բորբոքում, հուր էր տալիս դեռ չկոփված, չեկած կյանքին:

Իմ օրերում շա՜տ էր դժվար երգը՝ կյանքի համար երգած.-
Յուրաքանչյուր բառը - կամ մի թռի՛չք էր վեհ, կամ -մութ արկած:

Բայց օրերում իմ հուրհուրան աշխա՛րհ էր նոր ծնվում հնից,-
Եվ մե՜ծ եմ ես, քանզի ինձ մեծ երթ էր նշված Պատմությունից...

Իմ օրերի երգը եթե իմ տողերից հիմա լսես-
Ուրեմն ես մե՜ծ եմ ու խոր, երգի՛ց էլ իմ՝ խոր ու վսեմ...

Եվ եթե ես ունեմ մի բան, որով կարող եմ պարծենալ-
Իմ օրերի շափաղն է այդ, իմ օրերի ձայնը անահ...

Ողջո՜ւյն, ուրեմն, օրերիս, իմ օրերի անհո՜ւն շնչին,-
Եվ օրերիս հանդեպ այդ մեծ - թող երգս ձեզ թվա չնչին...

Բայց եթե կա երգում իմ գեթ շեշտ կամ մի բառ իմ օրերից-
Ես կմնամ հա՛ր ու հավետ, ես կարթնանամ մահից նորից...

Մե՜ծ եմ և իմ օրերով - ես այդ գիտեմ - հուր- հավիտյան,
Ողջո՜ւյն, իմ ե՛րգ, իմ խնդությո՛ւն, իմ օրերի անհուն մատյան...

1934, 3. 2. ԵՐԵՎԱՆ

> Սիրեք և հարգեք կնոջը, փնտրեք նրա մեջ ոչ միայն մխիթարություն, այլ զորություն, ոգեշնչում, ձեր բարոյական ու հոգեկան ընդունակությունների սատարում:
>
> *Ջ. ՄԱՉԻՆԻ*

Հանդիպում շրջանավարտ ուսուցիչների հետ

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ղեկավարության նախաձեռնությամբ ֆակուլտետում հանդիպում էր կազմակերպվել Երևանի և մարզերի պատմության մի խումբ բուհի շրջանավարտ ուսուցիչների հետ՝ քննարկելու «Պատմություն» առարկայի արդի հիմնախնդիրները:

Ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը հանգամանորեն խոսեց «Պատմություն» առարկայի մերօրյա հիմնախնդիրների մասին՝ ընդգծելով, որ ֆակուլտետում առավել ուշադրություն է դարձվել պատմագիտական խնդիրներին՝ հետին պլանում թողնելով առարկայի դասավանդման մեթոդիկան:

Ներկա հանդիպման նպատակն էր շրջանավարտ ուսուցիչների հետ քննարկել դասավանդման մեթոդիկայի հարցերը, գտնել առարկայի դասավանդմանը խանգարող խնդիրների լուծման ուղիներ:

Դեկանը բարձրաձայնեց՝ ֆակուլտետի դասախոսների և պրակտիկ ուսուցիչների միջև խզում է առաջացել. տարիների ընթացքում սերնդափոխություն է եղել, փոխվել են խնդիրներն ու մարտահրավերները: Ահա ինչու երկխոսություն է հրավիրել ֆակուլտետի շրջանավարտ ուսուցիչներին՝ լսելու նրանց կարծիքներն ու առաջարկությունները: Ֆակուլտետի դասախոսներն էլ պատրաստ են ուսուցիչների համար անցկացնել բաց դասեր՝ նվիրած պատմագիտության նորօրյա խնդիրներին:

Ելույթ ունեցող դասախոսները կարևորեցին տեխնոլոգիական տարբեր գործիքների՝ էլեկտրոնային քարտեզների և այլ միջոցների կիրառումը դասերի ընթացքում՝ հորդորելով ուսուցիչներին վերոհիշյալ գործիքների կիրառությամբ բարձրացնել դասի արդյունավետությունը:

Տեղի ունեցավ գործնական քննարկում, որի ընթացքում, ելնելով իրենց դասավանդման փորձից, ուսուցիչները խոսեցին հանրակրթական դպրոցների պատմության դասագրքերում, ինչպես նաև թեստերում տեղ գտած մի շարք բացթողումների մասին:

Դեկանն առաջարկեց ստեղծել սոցիալական հարթակ, որտեղ կհամատեղվեն առարկայի դասավանդման խնդիրներին վերաբերող ամենատարբեր հարցեր, կլսեն դասախոսների և ուսուցիչների կարծիքներ ու առաջարկություններ:

Էդգար Հովհաննիսյանն ուսուցիչներին տեղեկացրեց, որ մտադիր են ստեղծել ֆակուլտետի շրջանավարտների միավորում, «Պատմության արդի հիմնախնդիրներ» վերնագրով պարբերական, ինչպես նաև պատմության արդի խնդիրներին նվիրած լաբորատորիա:

«Խիստ կարևոր է ձեր փորձի հանրայնացումը, խնդիրների վերհանումը հենց պրակտիկ ուսուցչի կողմից»,-ասաց պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը՝ ցավով նշելով, որ սովորողները պատմություն չեն սիրում, որ այն սերմանելու խնդիր ունենք:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցիչները որքանով կինտեգրվեն այդ գործընթացներին: «Եկել է միասին մտածելու, ելքեր ու հնարավորություններ գտնելու և դրանք կյանքի կոչելու ժամանակը»,-ասաց դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Ժամանակի ընթացքում գեղեցիկ ու հմայիչ կնոջ չափանիշները նույնպես փոխվել են»,-

ասում է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե ԳԱԼՍՏՅԱՆԸ

- Տիկին Գալստյան, ներկայացեք խնդրեմ:

- 1995-ին ավարտել եմ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը:

2002-2005 թթ.-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աբովյանագիտության կաբինետի վարիչ եմ եղել՝ այն համատեղելով դասախոսական աշխատանքի հետ: 2005 թ.-ից առայսօր Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս եմ, բանասիրական գիտությունների թեկնածու(2003 թ.), դոցենտ (2012 թ.):

Իմ ուսումնասիրության շրջանակում հետևյալ դասընթացներն են՝ «Հայ նորագույն գրականության պատմություն», «Արդի պատմավիպասանություն», «Հայ նոր գրականության պատմություն», «Պատմության գեղարվեստական ընկալման առանձնահատկությունները», «Պատմության և անհատի փոխհարաբերության պրոբլեմը նորագույն պատմավիպասանության մեջ»:

Մասնակցել եմ մի շարք վերապատրաստումների, հանդես եմ եկել նաև որպես ուսուցիչների վերապատրաստող:

Տասնյակ հոդվածների, ուսումնամեթոդական գրքույկի, մենագրության հեղինակ եմ:

- Տիկին Գալստյան, գլոբալիզացիայի դարում, ըստ Ձեզ, որքանով են փոխվել կնոջ դերն ու գործառույթները: Ինչպե՞ս եք Դուք վերաբերվում այդ երևույթին:

- Գլոբալիզացիան իր ազդեցությունն ունի երկրի հասարակական, քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Ուստի այդ փոփոխություններից անմասն չէ նաև կինն իր գործառույթներով: Ես կասեի ոչ թե փոխվել, այլ ընդլայնվել են կնոջ գործառույթները:

Երբ թերթում ենք պատմության էջերը, մեզ համար ակնհայտ է դառնում, որ հայ կինը բոլոր ժամանակներում էլ իր վճռական դերն է ունեցել:

Վերջին տարիներին հատկապես մեծացել են հայ կնոջ մասնակցությունն ու դերը քաղաքական, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այո, կինն ունակ է պատասխանատու և կարևոր դիրք զբաղեցնելու տարբեր հաստատություններում և հաջողելու իր գործում: Իրականության մեջ մենք ունենք այդպիսի բազում օրինակներ: Իհարկե, ողջունելի է այդ փաստը և միանգամայն ընդունելի: Բայց հասարակության մեջ կարևոր դիրք ունենալը չպիտի խաթարի հայ կնոջ առաքինի նկարագիրն ու դերը հայկական ընտանիքում:

- Ո՞րն է կնոջ կենսակերպի Ձեր բանաձևը:

- Ճանաչել սեփական էությունը և ճիշտ դրսևորել քեզ տրված հատկանիշները՝ հիմքում ունենալով պատվախնդիր, բարի, արդարամիտ ու ազնիվ կնոջ որակները:

- Արժեքների վերագնահատման մեր օրերում ինչպե՞ս եք կարողանում Ձեր ուսանողների մեջ սերմանել ամենակարևորը՝ բարոյական արժեքները՝ դրանք համադրելով մասնագիտական գիտելիքներին:

- Արդի հարափոփոխ ժամանակներում պետք է կարողանանք ճիշտ արձագանքել մարտահրավերներին, որպեսզի նպաստավոր պայմաններ ստեղծենք բարոյապես բարձր արժեքներ ունեցող սերունդ դաստիարակելու համար:

Այսօրվա ուսանողությունը մեր քաղաքակրթության ապագան է և նրա մեջ բարոյական ճիշտ արժեքներ սերմանելը մեր՝ դասախոսներիս առաջնային պարտականությունը պետք է լինի: Պատմությունը վկայում է, որ կենսունակ են և ապագա ունեն այն ազգերը, որոնք ավանդապաշտ են և առանձնակի սեր են տածում ազգային արժեքների՝ ազգային սովորույթների, մայրենի լեզվի, եկեղեցու, ինչպես նաև սեփական պետության նկատմամբ: Գրեթե յուրաքանչյուր դասաժամի մենք անդրադառնում ենք այս խնդիրներին և գեղարվեստական ստեղծագործությունների քննության միջոցով (իսկ հայ գրականությունը հարուստ է ազգային, բարոյական և մարդկային բարձր որակներ դավանող երկերով) վերահաստատում վերը նշված բարոյական արժեքներին և ազգային հոգեկերտվածքին հավատարիմ մնալու կարևորագույն գաղափարները:

- Դասախոս-ուսանող հարաբերություններում ինչի՞ վրա եք շեշտը դնում:

- Դասախոս-ուսանող հարաբերությունները կարող են արդյունավետ լինել այն դեպքում, երբ կողմերը հստակ պատկերացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրականացման սահմանները: Կարևոր է ուսանողին օգնել հասկանալու ինքնուրույն սովորելու ուղիները և մեթոդաբանությունը:

Բացի այդ՝ պետք է կարողանալ այնպիսի հարաբերություններ ձևավորել, որ ուսանողի գերնպատակը ոչ թե գնահատական կորզելը լինի, այլ հաճույքով դասին ներկայանալն ու գիտելիքների պաշարը հարստացնելը: Այս ամենը կարող ենք իրականացնել՝ փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ ձևավորելով:

- Ի՞նչ մեթոդներ եք կիրառում, որ Ձեր դասախոսություններն ու դասերը հետաքրքրեն ուսանողներին:

- Վերջին տարիներին փոխվել են դասավանդման մեթոդներն ու եղանակները: Դասախոսություններ թելադրելու մեթոդն այլևս արդիական չէ: Մեր օրերում կարևորվում են ուսանողակենտրոն մոտեցումը և ինտերակտիվ ուսուցման համակարգը: Չնայած որ դասի հիմնական դերակատարը (հատկապես մեծ լսարաններում) շարունակում է մնալ դասախոսը, բայց ես փորձում եմ քննարկումներ և բանավեճեր անցկացնելու մեթոդներով ներգրավել ուսանողներին դասագործընթացի մեջ: Ուսանողները գիտեն, որ ինձ համար նախընտրելի են իրենց ինքնուրույն վերլուծություններն ու սեփական տեսակետները, որոնք կնպաստեն նրանց քննադատական մտածողության, հետազոտական կարողությունների զարգացմանը:

- Բնութագրեք մերօրյա ուսանողին:

- Իհարկե, կան անձնային տարբեր որակներ ու հատկանիշներ ունեցող ուսանողներ, բայց եթե փորձենք ընդհանուր գնահատական տալ, պիտի ասեմ, որ մերօրյա ուսանողը համարձակ է, ինքնավստահ, նպատակասլաց, պատվախնդիր, հարցասեր, ունի ինքնատիպ մտածողություն, ունակ է պաշտպանելու սեփական տեսակետն ու իր իրավունքները: Կցանկանայի, որ այս բոլոր որակները նրանք ծառայեցնեն ի շահ ազգայինի:

Ինձ համար հաճելի է ու հետաքրքիր այսօրվա ուսանողի հետ աշխատելը:

- Ի՞նչ նախասիրություններ ունեք, որոնցով հարստացնում եք Ձեր առօրյան:

- Ընթերցանությունից բացի (որը ավելի շատ մասնագիտություն է, քան նախասիրություն) սիրում եմ ճաշակով երաժշտություն լսել, ժամանակ անցկացնել ընտանիքիս, ընկերներիս հետ, որն ինձ հոգեկան մեծ բավականություն է պարգևում: Սիրում եմ շրջագայել, բացահայտել հատկապես Հայաստանի գեղեցիկ և գողտրիկ անկյունները:

- Որո՞նք են այն հատկանիշները, որ կնոջը դարձնում են գեղեցիկ ու հմայիչ:

- Ժամանակի ընթացքում գեղեցիկ ու հմայիչ կնոջ չափանիշները նույնպես փոխվել են, բայց ինձ համար գեղեցիկ ու հմայիչ կինը շարունակում է մնալ ներքին ու արտաքին գեղեցկության ներդաշնակությամբ օժտված կինը: Իսկ ներքին գեղեցկության առաջին գրավականն, ըստ իս, կրթված լինելն է, որովհետև, ինչպես փաստում է նաև Պիեռ Բոմարշեն. «Գեղեցի՛կ եղիր, եթե կարող ես, իմաստուն, եթե ցանկանում ես, բայց խելամիտ պետք է լինես անպայման»:

Կնոջը գեղեցկացնում են նաև բարությունը, առաքինությունն ու խոհեմությունը: Ուստի, «գեղեցկության մասին հոգալիս պետք է սկսել հոգուց և սրտից, այլապես ոչ մի շպար չի օգնի»:

- Մերօրյա դժվարությունները հաղթահարելու «դեղատոմս» ունե՞ք. ի՞նչ եք անում հուսահատության պահերին:

- Մենք ապրում ենք ճգնաժամային իրավիճակներ, սակայն մարդն ուժեղ ինքնապաշտպանական համակարգ ունի և կարողանում է հաղթահարել դժվարությունները և դրանցից դուրս է գալիս ավելի ամուր և պաշտպանված:

Հուսահատության պահերին փորձում եմ ինքս ինձ վստահեցնել, որ ամեն ինչ ժամանակավոր է, անցողիկ և ստիպում եմ ինձ նվիրվել նախընտրած զբաղմունքներիս: Պետք չէ ընտելանալ հուսահատությանը, այլապես դրանից ազատվելն ավելի դժվար է լինում: Համբերատարության, համառության և կամային ուժեղ դրսևորումների արդյունքում կարող ենք ձերբազատվել հուսահատական հոգեվիճակներից:

- Ինչպիսի՞ն է Լուսինե Գալստյանն ընտանիքում:

- Ինչպես բոլոր հայ մայրերն ու կանայք՝ հոգատար մայր (տղաներիս բնութագրմամբ՝ երբեմն չափից դուրս) և կին: Սիրում եմ համեղ պատրաստել և հյուրեր ընդունել:

Որոշ հարցերում ժամանակակից եմ, բայց հիմնականում հայ ավանդապաշտ կնոջը բնորոշ հատկանիշների կրողն եմ:

- Այսօր կրթված ու բարեկիրթ հասարակության առկայությամբ են պայմանավորված շատ գործընթացներ, այդ թվում՝ երկրի անվտանգության պահպանումն ու հզորացումը: Ո՞րն է դասախոսի առաքելությունն այդ գործում:

- Միանշանակ ցանկացած երկրի զարգացման և հզորացման հիմքը կրթված հասարակությունն է: Կրթվելու ձգտումը միշտ էլ հայի ազգային բնավորության բաղկացուցիչ մասն է կազմել: Այսօր, ավելի քան երբևէ, կրթությունը դառնում է առաջնահերթ խնդիրներից մեկը, քանի որ կրթությունն այն հիմնաքարն է, որի վրա կառուցվում է Հայաստանի ապագան: Իսկ այդ գործում խիստ կարևորվում են մեր՝ դասախոսներիս դերն ու գործունեությունը: Մասնագիտական գիտելիք հաղորդելուն զուգընթաց պետք է կարողանանք ուսանողների մեջ զարգացնել մարդկային, ազգային այնպիսի արժեքներ, որոնք կօգնեն իրենց՝ ապագայում այն ծառայեցնելու երկրի շենացման գործին: Չէ՞ որ նրանք են մեր վաղվա գիտնականներն ու ուսուցիչները: Կարևոր է, թե ինչ արժեհամակարգի կրող է դասախոսը և դա ուսանողներին փոխանցելու ինչպիսի հմտություններ ունի: Դիմակայելով ներկա բոլոր դժվարություններին ու մարտահրավերներին՝ դասախոսը պետք է ցուցաբերի սրտացավություն, աշխատանք և անմնացորդ նվիրում՝ նպատակին հասնելու համար:

- Ի՞նչ կմաղթեք 100-ամյա համալսարանի կանանց և աղջիկներին:

- Ինձ համար հարազատ դարձած կրթօջախի կանանց և աղջիկներին մաղթում եմ քաջառողջություն, ընտանեկան ջերմություն, խաղաղ և հզոր հայրենիքում ապրելու և արարելու հնարավորություն:

Լինենք ուժեղ և կենսունակ արժանապատիվ սերունդներ կրթելու և դաստիարակելու պատասխանատու գործում:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ճահեկյան համագործակցություն

Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում շարունակվում են այցելությունները հանրակրթական և միջին մասնագիտական տարբեր ուսումնական հաստատություններ: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի մասնագիտական կողմնորոշման իրազեկման խմբի անդամները դեկան, բ.գ.դ, պրոֆեսոր Աշոտ Գալստյանի առաջնորդությամբ այցելեցին Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ: Ընտրությունը պատահական չէր, քանի որ մեծ շանսոնյեի անունը կրող քոլեջի մանկավարժական և վարչական անձնակազմի գերակշիռ մասը մեր բուհի տարբեր ֆակուլտետների շրջանավարտներ են, և տարիներ շարունակ այս հաստատության շրջանավարտները բարձրագույն կրթությունը շարունակելու համար նախապատվությունը տալիս են հենց մանկավարժական մայր բուհին:

Կրթության մասին օրենքի կարգավորումներով ՀՀ միջին մասնագիտական կրթություն իրականացնող կրթական հաստատությունների՝ բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներն իրավունք ունեն համապատասխան առարկայական տարբերությունները հանձնելուց հետո ընդունվել և իրենց կրթությունը շարունակել բուհի 2-րդ կուրսում: Այս առումով էլ այցը նպատակային էր:

Դեկան Ա. Գալստյանը, բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Նաիրա Խաչատրյանը, ֆակուլտետի աշխատակից, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Հովհաննես Սարգսյանը և բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի

ուսանողուհի, ուսանողական խորհրդի նախագահ Մերի Առաքելյանը քոլեջի ուսանողների հետ հանդիպմանը նախ ներկայացրին 100-ամյա Մանկավարժականի 10 ֆակուլտետների, 50-ից ավելի մասնագիտությունների, առկա և հեռակա ուսուցման, կրեդիտային համակարգի, միջազգային հեղինակավոր բուհերի հետ համագործակցության, ինչպես նաև շարունակական կրթության առավելություններն ու առանձնահատկությունները:

«Այս դժվարին ժամանակներում մշակույթի և արվեստի ոլորտներում մասնագիտական ընտրություն կատարելը հերոսություն է»,- հայոց լեզվի, գրականության, արվեստի ու մշակույթի ընդհանրությունների և բանասիրական ֆակուլտետի ավանդույթների մասին խոսելիս արձանագրեց Աշոտ Գալստյանը:

«Մայրենի լեզվին տիրապետելը և հայ գրականության լավագույն նմուշներին ծանոթ լինելն անհրաժեշտություն է ոչ միայն լեզվաբանների ու գրականագետների, այլև ռեժիսորի, դերասանի, նկարչի, լրագրողի և այլ մասնագիտություններ ընտրող անձի համար՝ շփման կարողությունների զարգացման, գրագիտության տեսանկյունից»,- նշեց երկրորդ մասնագիտությամբ ռեժիսոր Նաիրա Խաչատրյանը:

«Ուսանողական առօրյան գերհագեցած է. մշակութային, մարզական, ինտելեկտուալ և ժամանցային ծրագրերը, ամառային և ձմեռային հանգստի ապահովումը ճանձրանալու առիթ չեն տալիս ոչ մի ուսանողի», - ասաց Մերի Առաքելյանը:

Քոլեջի հայոց լեզվի և գրականության դասախոս, բանասիրականի շրջանավարտ Սոնա Վանյանը ոգևորությամբ հիշեց Մանկավարժականում անցկացրած ուսանողական տարիները՝ երախտագիտությամբ նշելով իրեն դասավանդած դասախոսների անունները:

Մանկավարժականի ներկայացուցիչները Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի գրադարանին նվիրեցին բանասիրական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ամբիոնների կողմից տպագրված գրքեր, գիտական հրատարակություններ և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Քոլեջի տնօրեն Վրեժ Կիրակոսյանի, ուսումնական հարցերով տնօրենի տեղակալներ Աննա Կիրակոսյանի և Հասմիկ Սարգսյանի, ինչպես նաև կարիերայի կենտրոնի պատասխանատու Լիլիթ Եղիազարյանի հետ քննարկվեցին և նախանշվեցին հետագա համագործակցության հետ կապված հարցեր. մասնագետների փոխգործակցություն, ուսանողների պրակտիկաների անցկացում, համատեղ միջոցառումների կազմակերպում, փոխայցելությունների շարունակականություն:

Մանկավարժականցիների համար կազմակերպվեց շրջայց քոլեջի մասնահարկերում. ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանի անվան թանգարան-լսարան, օպերատորների, զգեստի մոդելավորողների, երաժիշտների համար առանձնացված համակարգչային լսարաններ, տաղանդավոր ուսանողների հեղինակած նկարների և արվեստի գործերի ցուցադրություն:

Հովհաննես ՍԱՐԳՍՅԱՆ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

«Մեր երկրում բնագիտական ոլորտում աշխատանք գտնելու և բարձր վարձատրություն ստանալու հնարավորությունները քիչ են»,-

ասում է ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյանը

ՀՊՄՀ ուսանողների փոխանակության ծրագրի շրջանակներում Քնարիկ Համբարձումյանը ուսանել է Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների (BOKU) համալսարանում:
Ստորև ներկայացնում ենք մեր հարցազրույցն ուսանողուհու հետ:

- Ինչպես ստացվեց, որ մասնակցեցիք ուսանողների փոխանակման ծրագրին և սովորեցիք Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանում:

- 2022-ի ամռանը համալսարանի միջազգային հարաբերությունների բաժնից հայտարարություն եղավ Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանում ուսանելու հնարավորության մասին: Քանի որ ես համապատասխանում էի անհարաժեշտ պահանջներին, որոշեցի դիմել, արդյունքում հարցազրույցն անցնելով, ընտրվեցի որպես մասնակից:

- Պատմեք այնտեղ ձեր ուսումնառության մասին:

- Այնտեղ ուսանել եմ 5 ամիս՝ 2022 թվականի ձմեռային կիսամյակի ընթացքում: Ուսումնասիրել եմ 9 մասնագիտական առարկա: Հնարավորություն եմ ունեցել շփվելու տարբեր երկրներից ծրագրին մասնակցող ուսանողների հետ և ընդլայնելու ընկերական շրջապատս: Ծանոթացել եմ Եվրոպայի կրթական ծրագրին, զարգացրել եմ մասնագիտական և լեզվական ունակություններս: Միաժամանակ հասցրել եմ մի փոքր ճամփորդել և բացահայտել եվրոպական մշակույթը:

- Կարո՞ղ եք զուգահեռներ անցկացնել Հայաստանի և այդ երկրի կրթական համակարգերի մեջ, ի՞նչ ընդհանրություններ և առանձնահատկություններ նկատեցիք:

- Նախ կասեմ, որ ՀՊՄՀ-ում ստացած գիտելիքներն ինձ շատ են օգնել Վիեննայում ուսանելու ընթացքում, և երբեք գիտելիքի պակաս չեմ զգացել: Կրթական համակարգում բնականաբար կային տարբերություններ՝ սկսած տեխնիկական, դասընթացի անցկացման, քննությունների վարման կարգից մինչև դասախոս- ուսանող հարաբերություններ: Քննության անցկացման ձևերն ընտրածս յուրաքանչյուր առարկայի համար տարբեր էին, մի դեպքում հետազոտական աշխատանք էինք իրականացնում և խմբով ներկայացնում, մի դեպքում՝ ամեն շաբաթ առաջադրանքներ կատարում և արդյունքում վերջնական գնահատվում, մեկ այլ դեպքում՝ գրավոր քննություն հանձնում կամ զեկույց ունենում: Կրթական համակարգը շատ ճկուն և ուսանողակենտրոն էր, կարևորվում էին ուսանողի կարիքները և նախասիրությունները:

- Եղա՞ն ճանաչողական էքսկուրսիաներ, ընթերցողների հետ կիսեք ստացած տպավորությունները:

- Համալսարանը երեք օր միջազգային ուսանողների ընդունելության օրեր հայտարարեց, որոնց ընթացքում մեզ ծանոթացրին համալսարանի կառուցվածքին, բաժիններին, գրադարանին: Կազմակերպվեց ճանաչողական էքսկուրսիա Վիեննայի կենտրոնում, որի ընթացքում զբոսավարը հետաքրքիր փաստեր նշեց քաղաքի մասին: Ունեցանք քայլարշավ դեպի Վիեննայի ամենաբարձր կետը, որի ընթացքում անցանք խաղողի դաշտերով և ուսումնասիրեցինք գինեգործության արվեստը:

Ընտրածս դասընթացներից մեկի շրջանակներում ունեցանք արշավներ դեպի Ավստրիայի անտառներ, հատուկ պահպանվող տարածքներ, ինչպես նաև բարձրացանք Ռաքս լեռը:

- Հե՞շտ է լինել ՀՊՄՀ ուսանող. ի՞նչ առավելություններ ու թերություններ կնշես:

- Ըստ իս, ուսանողի հեշտ կամ դժվար լինելը շատ սուբյեկտիվ է: Իմ պարագայում հեշտ է եղել, քանի որ սիրել եմ սովորել և գիտելիքներս ընդլայնել, ուստի հաճույք եմ ստացել կրթական պրոցեսից: ՀՊՄՀ-ի գլխավոր առավելությունն այն է, որ տալիս է մանկավարժի որակավորում, որն անգամ ուսուցիչ չդառնալու պարագայում կարևոր է, քանի որ նպաստում է անձի սոցիալական ունակությունների զարգացմանը: Թերությունն էլ, կարծում եմ, բուն մասնագիտական առարկաների մասով, տվյալ դեպքում կարող եմ խոսել կենսաբանության մասին, ավելի գիտելիքակենտրոնությունն է և գործնական, դաշտային պարապունքների երկրորդ պլանում լինելը:

- Կարո՞ղ եք բնութագրել մերօրյա ուսանողին՝ ձեր կուրսի օրինակով:

- Կարծում եմ ուսանողները լինում են երկու հիմնական տիպի՝ նրանք, ովքեր եկել են սովորելու, ունեն հստակ նպատակ և գիտեն ինչի համար են սովորում, և ուսանողներ, ովքեր եկել են համալսարան բարձրագույն կրթության վկայական ստանալու համար. նրանց մեծամասամբ կրթական պրոցեսը չի հետաքրքրում:

- Ինչո՞ւ բնական գիտությունների ոլորտի մասնագիտությունները չեն հետաքրքրում հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին, հատկապես երբ այսօր այնքան անհրաժեշտ են մեր երկրի զարգացման ու առաջընթացի համար:

- Աշակերտն ապագա մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշվելիս հաշվի է առնում աշխատանքային հեռանկարները, աշխատանքի ընդունվելու հավանականությունը և հնարավոր աշխատավարձի չափը: Տվյալ պարագայում մեր երկրում բնագիտական ոլորտում աշխատանք գտնելու և բարձր վարձատրություն ստանալու հնարավորությունները քիչ են, ինչն էլ հիմնական պատճառն է, որ աշակերտները չեն ընտրում: Ու գրեթե նույն պատճառով այն անձինք, ովքեր սովորում են բնագիտական առարկաներ, հետագայում փոխում են իրենց կողմնորոշումը և աշխատում օրինակ IT ոլորտում:

- Ի՞նչ կուզես մաղթել մեր պաշտոնաթերթի ընթերցողներին, ուսանողներին:

- Կցանկանամ մաղթել, որ հավատան իրենց ուժերին և բաց չթողնեն այլ երկրում սովորելու հնարավորությունը, քանի որ այն ինքնուրույության, ինքնաբացահայտման, աշխարհաճանաչման յուրահատուկ փորձ է, որը կարող է հետք թողնել նրանց հետագա կյանքի վրա:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Պրակտիկա

Ճանաչել և գնահատել մաթեմատիկայի դերը մարդու կյանքում

Պրակտիկան ուսումնական գործընթացի էական և կարևորագույն մասն է, քանի որ այն ապագա մանկավարժին հնարավորություն է տալիս ձեռք բերել նոր և բազմապիսի հմտություններ, կարողություններ, ձևավորել ուսուցչի սեփական օրինակը: Տեսական և գործնական գիտելիքների համադրությամբ ուսանողը ստանում է իր մասնագիտության ամբողջական պատկերը:

Դիպուկ է Դ. Մենդելեևի խոսքը. «Տեսությունը, որ չի ստուգվում փորձով, իր հայեցակարգի գեղեցկությամբ հանդերձ՝ կորցնում է կշիռը, չի ընդունվում. պրակտիկան, որի հիմքում չկա կշռադատված տեսություն, կորստի ու պարտության մեջ է»:

Ուսումնական տարում Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողներն իրենց կիրառական-ամփոփիչ պրակտիկան անցկացրին Երևանի դպրոցներում: Պրակտիկան տևեց 6 շաբաթ, որի ընթացքում ուսանողները վարեցին դասեր, կազմակերպեցին բաց դասեր, վիկտորինաներ: Դասերն անցկացրել են տարբեր մեթոդներով, կիրառել ինչպես ավանդական, այնպես էլ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ:

Դասեր անցկացնելուց զատ, պրակտիկանտներն իրականացրել են նաև տարաբնույթ միջոցառումներ: Եղիշե Չարենցի անվան № 67 դպրոցում նրանք մեթոդիստ Ա. Մինասյանի գլխավորությամբ կազմակերպել էին համադպրոցական միջոցառում՝ «**Կետի և ուղղի էվոլյուցիան**» խորագրով, որի նպատակն էր մաթեմատիկայի նկատմամբ սեր և հետաքրքրության առաջացնելը, աշակերտներին ցույց տալ նրա գեղեցկությունը և կապը առօրյայի հետ, ինչպես նաև մեկնաբանել, որ բոլոր երկրաչափական պատկերները կապված են միմյանց հետ և առաջանում են մեկը մյուսից: Վիկտորինայի նպատակներից էին նաև սովորողների գիտելիքների ստուգումը, ճանաչողական մտածողությունը զարգացնելը, խնդիրների լուծման նկատմամբ ինքնավստահության, խմբային աշխատանքի միջոցով համատեղ մտավոր աշխատանքի ձևավորումը, ինչպես նաև աշակերտների արժեհամակարգի ձևավորումն ու տաղանդավոր աշակերտների բացահայտումը:

Խ. Աբովյանի անվան № 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանում կազմակերպվել էր **«Նման եռանկյուններ»** թեմայով բաց դաս՝ մեթոդիստ Օ. Սահակյանի գլխավորությամբ: Նպատակն էր՝ ճանաչել և գնահատել մաթեմատիկայի դերը մարդու կյանքում, ընդլայնել աշակերտների իմացության մտահորիզոնը, ստեղծել միջառարկայական կապեր, զարգացնել բարոյական արժեքներ: Ցույց է տրվել երկրաչափական պատկերների վերաբերյալ գիտելիքների կարևորությունը և կիրառությունը:

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարանում իրականացվել է **«Երկրաչափական պատկերները բնության մեջ»** խորագրով միջոցառում, իսկ **«Մաթասպետ»** վերնագրով միջոցառման նպատակն էր զարգացնել աշակերտների մտածողությունն ու տրամաբանությունը: Միջոցառման ընթացքում ներառված էր նաև մաթեմատիկական խաչբառը մեծ ոգևորվածություն էր առաջացրել աշակերտների մոտ: Մեթոդիստներն էին Վ.Վարդապետյանը և Վ.Վարդազարյանը:

Պրակտիկանտները միջոցառումներ ե՛ն իրականացրել նաև Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցում մեթոդիստներ Ա. Գրիգորյանի և Գ. Ասատրյանի գլխավորությամբ: Միջոցառումները կրում էին ուսուցանող, զարգացնող և դաստիարակող բնույթ. սովորեցնում էին բացառման կանոնը, զարգացնում փոխհամագործակցության կարողությունները, փաստարկման և միմյանց լսելու կուլտուրան, տրամաբանությունը, երևակայությունը:

Միջոցառումներին ներկա էին պրակտիկայի ղեկավար Ա. Մկրտչյանը, ֆակուլտետի դեկանի տեղակալ Ն. Օրդյանը, ամբիոնի վարիչ Լ. Ղուլղազարյանը, պրակտիկայի մեթոդիստները, ուսուցչական կոլեկտիվը:

Պրակտիկան ուսանողներին հնարավորություն տվեց ոչ միայն գործնականում կիրառել իրենց գիտելիքները, բացահայտել մանկավարժական գործունեության մեջ իրենց ուժեղ և թույլ կողմերը, ստեղծագործելու, գեղեցիկ և արդյունավետ դասեր կազմակերպելու, ճիշտ մեթոդ ընտրելու, դասարանի կարգապահությունը ապահովելու կարողություններ, այլև մասնագետների, աշակերտների, ծնողների հետ աշխատելու հմտություններ:

Մարգարիտա ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մաթեմատիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

Անարդարության պատճառով թողեց մեծ սպորտը

«Բնավորության գիծ է՝ չեմ սիրում պարտվել»,- մեզ հետ զրույցում անկեղծանում է բռնցքամարտիկ Սաշ Դիլանյանը: Նա ավարտել է Երևանի օլիմպիական պետական մարզական քոլեջը, այնուհետև ընդունվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, սակայն ուսումը անավարտ է թողել:

Սաշ Դիլանյանը բազմաթիվ հաջողություններ է գրանցել Հայաստանի, Ռուսաստանի և Վրաստանի առաջնություններում՝ գրավելով առաջին հորիզոնականներ: Չեմպիոն է: «Իհարկե, եղել են, որ ունեցել եմ 2-րդ տեղի մրցանակներ, սակայն գերակշռում են չեմպիոնի տիտղոսներս»:

Ինչպես ուսանողի կայացման գործում մեծ դեր է կատարում դասախոսը, այնպես էլ մարզիկի կյանքում՝ մարզիչը: Մասնագիտական ամեն պարագայում նրան աջակցողն իր անձնական մարզիչն է եղել, իսկ մոտիվացնողը՝ հայրը:

«Հայրս ամեն պարագայում միշտ իմ կողքին է, դա է պատճառը, որ ես իմ բոլոր հաջողությունները վերագրում եմ նրան»:

Համալսարանում կրթությունը կիսատ թողնելուց հետո Սաշ Դիլանյանը տեղափոխվեց Ռուսաստան՝ փորձելով այնտեղ շարունակել կարիերան: «Սակայն դրա համար պարտադիր էր դառնալ Ռուսաստանի քաղաքացի, իսկ ես այդ չէի ուզում: Դրանից հետո վերջնականապես հրաժարվեցի բոքսից»: Սպորտից հրաժարվելը մարզիկի մոտ միանգամից չի եղել, այլ հասունացել է:

«Ես ինձ Հայաստանում գնահատված չեմ զգացել, ես հաղթել եմ տարբեր առաջնություններում, բայց այլ մարզիկների են ուղարկել Աշխարհի, Եվրոպայի առաջնություններ: Հաղթել եմ ռինգը, բայց արդյունքում գոտին տվել են պարտվողին»:

Սաշ Դիլանյանը 44 օրյա պատերազմի մասնակից է, ծառայել է Նոյեմբերյանի Կողբի զորամասում. պատերազմի առաջին օրվանից եղել է դիրքերում: Բայց չի սիրում խոսել պատերազմի և այդ օրերի իր ապրումների մասին:

Այսօր մարզիկը Հայաստանում չէգ հեռացել է հայրենիքից, սպորտից, չնայած նրան, որ դեռ հայրենի քաղաքում իրեն է սպասում հաղթանակները խորհրդանշող և փառավոր անցյալը հիշեցնող գոտիներով ու գավաթներով զարդարված սենյակը:

Անարդարության պատճառով Սաշ Դիլանյանը սիրելի սպորտը թողեց անցյալում:

Շողեր ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Հայրենիք - Սփյուռք

«Մենք հեռու ենք հայրենիքից, բայց հայրենիքը՝ մեր սրտում Հայաստանը քաղաքակրթության օրրանն է, հին աշխարհի առաջատար և զարգացած երկրներից մեկը»:

Ֆրանց Վերֆել

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԽՆԴԻՐԸ

Վաղնջական ժամանակներից քաղաքակրթության բնօրրան հանդիսացող Հայաստանն այսօր կրկին ճգնաժամի մեջ է: Դամոկլյան սուրը կրկին կախվել է մեր ժողովրդի գլխին:

Մենք՝ տարագիրներս, ուզում ենք օգտակար լինել նրան և առաջին շեշտը դնում ենք հայապահպանության և հայերենի ուսուցման վրա: Ջանում ենք արկապված են իրենց պատմական հայրենիքի՝ Հայաստանի և Արցախի հետ:

Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետևանքով առաջացած ծանր ու դժվարին ժամանակահատվածում Կրասնոդարի և՛ երկրամասային, և՛ քաղաքային համայնքը կանգնած է Արցախի ժողովրդի կողքին և ցուցաբերում է մարդասիրական օգնություն:

տերկրում այն կազմակերպել բարձր մակարդակով: Մենք իրավունք չունենք թուլանալու, այլ պետք է կարողանանք կրթել ու դաստիարակել հայրենիքին նվիրված, բարձր բարոյական արժեքներով սերունդ, որը կդառնա հզոր հայրենիքի հենասյունը:

Կրասնոդարի երկրամասում հայերը երեկ չէ, որ հայտնվել են: Տարածաշրջանում նրանք բնակվել են առնվազն մ.թ.ա. 1-ին դարից: Պատմական հայրենիքից արտագաղթել են տնտեսական, կրոնական և քաղաքական դրդապատճառներից ելնելով: Սակայն բախտի քմահաճույքին տրված ու ճակատագրի բերումով՝ Կրասնոդարի երկրամասում հայտնված հայերը ոչ միայն կարողացել են գոյատևել, այլև հիմնավորվել և արարել, հասնել բարձունքների: Ապրելով հայրենիքից հեռու բազմազգ միջավայրում, բախվելով գոյապայքարի խնդիրներին՝ հաճախ կորցրել են իրենց ազգային նկարագիրը՝ լեզուն, հեռացել իրենց արմատներից, սովորություններից, օտար լեզուների ազդեցության տակ խաթարվել է նրանց լեզվական միասնականությունը:

Եվ այսօր Կրասնոդարի երկրամասում բնակվող հայերից շատերը չեն տիրապետում հայերենին, մի մասը խոսում է հայերենի բարբառներով, սակայն չի տիրապետում գրական խոսքին, չգիտեն հայ ժողովրդի պատմությունը: Հենց դրա համար էլ երկրամասի հայկական համայնքի առջև ծառացած է հայապահպանության գերխնդիրը, որի կարևոր նպատակը հայեցի սերունդ դաստիարակելն ու կայուն կրթական համակարգ ստեղծելն է: Այլ կերպ հնարավոր չէ, դա եկել է դարերի խորքից, իսկ այժմ այն պետք է ավելի արմատավորվի:

Քայլելով Կուբանի մայրաքաղաքում՝ Կրասնոդարում, ամենուրեք կարելի է տեսնել հայի հետքը՝ հայերի կառուցած հոյակերտ շենքեր (թե՛ հին, թե՛ նոր), վեհաշուք եկեղեցիներ, գեղեցիկ կրթամշակութային, առևտրի և զվարճանքի կենտրոններ:

Կուբանի հայերն անքակտելիորեն

Բազմաշերտ ու բազմաբնույթ է Կրասնոդարի երկրամասի հայերենի կրթական համակարգը: Ռուսաստանի հայերի միության երկրամասային կազմակերպության մեջ մտնում է 44 տեղական կազմակերպություն, որտեղ նախորդ տարիների համեմատ ավելացել է շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցների քանակը (մոտավորապես 20), բացվել են հայկական կրթամշակութային կենտրոններ (Արմավիրում, Ապշերոնսկում), հանրակրթական դպրոցներում ավելացել են հայերենի ուսուցման խմբերը (համայնքային իրավունքով), ռուսական կրթամշակութային կենտրոնների քանակը, որտեղ օժանդակ ուսուցման ծրագրով դասավանդվում է հայոց լեզու և հայրենագիտություն, ավելացել է էլեկտիվ կուրսերի և ֆակուլտատիվ պարապմունքների քանակը: Այս բոլոր կառույցներում աշխատում են 70-ից ավելի ուսուցիչներ: Ցավով եմ նշում, որ տարեցտարի դպրոցներում կրճատվում են մատյանային դասաժամերը: Դա լուրջ խնդիր է, պետական միջամտություն է պահանջվում, որը, ցավոք, չկա: Մենք անընդհատ բարձրաձայնում ենք այդ մասին և հուսով սպասում խնդրի լուծմանը:

Կրթական հաստատություններում կազմակերպվում է հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության ուսուցում, անցկացվում են ուսումնական արշավներ, աջակցություն է ցուցաբերվում ստեղծագործական խմբերին: Կազմակերպվում են ստեղծագործական մրցույթներ, հայագիտական օլիմպիադաներ, ազգային տոներին նվիրված մասսայական համայնքային միջոցառումներ: Տարեցտարի ընդլայնվում է նաև մրցույթի մասնակիցների աշխարհագրությունը՝ ընդգրկելով մասնակիցների այլ երկրամասերից ևս:

Հանդիպումներ են անցկացվում մշակութային գործիչների հետ, հրավիրվում են դասախոսներ: Հիշարժան են անցկացված երեկոները՝ նվիրված Հովհաննես Թումանյանի, Սիլվա Կապուտիկյանի, Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Այվազովսկու, Պարույր Սևակի և հայ մշակույթի այլ գործիչների ստեղծագործություններին:

Ուսուցիչների համար անցկացվում են կոնֆերանսներ և սեմինարներ, հրապարակվում և տարածվում է ուսումնական գրականություն:

2022 թվականին իմ հեղինակած «Սովորում եմ իմ մայրենի լեզուն», «Այբբենարան», «Հանրագիտակ այբբենարան» և «Սովորիր գրել հայերեն» ավելի քան 500 դասագիրք և աշխատանքային տետրեր են բաշխվել երկրամասի դպրոցներին, իսկ «Կարդա՛ և գրի՛ր հայերեն» ձեռնարկն ուղարկվել է փորձաքննության ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթության զարգացման և նորարարարության ազգային կենտրոն» հիմնադրամ: Հուսանք, որ պատասխանը կլինի դրական և նոր ուսումնական տարում կունենանք նոր դասագիրք:

Ստեղծվել է «Երկխոսություն» մշակութային կենտրոնը, որն անցկացնում է հայերենի և ռուսերենի անվճար դասընթացներ հայ համայնքի համար: Գործում է երաժշտական ստուդիան, որտեղ երեխաները սովորում են նվագել հայկական երաժշտական գործիքների վրա (դհոլ, քանոն), նաև վոկալի բաժին:

Լուրջ հաջողություն կարելի է համարել Կրասնոդարի Է. Ֆիլիցինի անվան պետական պատմահնագիտական թանգարան-արգելոցում հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և ավանդույթներին նվիրված մշտական ցուցադրության բացումը: Ցուցանմուշների թվում է 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայի դրոշի ճշգրիտ

պատճենը, այն դիվիզիայի, որը մասնակցել է նացիստական զավթիչներից Կուբանի ազատագրմանը:

2022 թ. օգոստոսին տեղի ունեցավ հայագիտական յոթերորդ բաց տարածաշրջանային օլիմպիադան: Ընդհանուր առմամբ օլիմպիադային մասնակցեց 12-ից 17 տարեկան 100 աշակերտ՝ Կուբանի բոլոր շրջաններից, ինչպես նաև Ռոստովի մարզից: Հաղթողներին շնորհվեցին պատվոգրեր և խրախուսական մրցանակներ, այդ թվում՝ մասնակցություն Համահայկական օլիմպիադային, որը հետագայում անցկացվեց Հայաստանում:

Այս տարի Կուբանի շրջանների հայկական համայնքների երեխաները մասնակցեցին Հայաստանում անցկացված «Քայլ դեպի տուն» կրթաճանաչողական ծրագրին: Հայագիտության տարածաշրջանային օլիմպիադայում հաղթած և լավ արդյունքներ ցուցաբերած տասներեք պատանիներ իմ ուղեկցությամբ մեկնեցին իրենց պատմական հայրենիք՝ Հայաստան:

Ամեն տարի տեղի է ունենում հայոց լեզվի և հայագիտության ուսուցիչների տարածաշրջանային համաժողով: Այս տարի հայոց լեզվի և հայագիտության ուսուցիչների «Կրթություն և դաստիարակություն. հայկական մշակույթը՝ որպես հայապահպանության հիմք» 4-րդ տարածաշրջանային համաժողովին մասնակցում էր 50 ուսուցիչ՝ ոչ միայն ամբողջ Կուբանի, այլև Ռուսաստանի Դաշնության այլ քաղաքներից:

Համաժողովն ավարտվեց Կուբանում առաջին անգամ անցկացվող 2021-2022 ուսումնական տարվա «Տարվա ուսուցիչ» և «Տարվա աշակերտ» տարածաշրջանային մրցույթների հաղթողների պարգևատրմամբ:

«Տարվա ուսուցիչ» անվանակարգում հաղթող ճանաչվեց Նովոռոսիյսկ քաղաքի Ռաևսկայա ավանի հայոց լեզվի ուսուցչուհի Արև Բալայանը: Նրա աշակերտները դարձան «Տարվա աշակերտ» տարածաշրջանային մրցույթների հաղթողներ:

Այն դարձավ բարի ավանդույթ:

Սկսվել է 2023 թվականը: Կրասնոդարի երկրամասի ՌՀՄ տարածաշրջանային մասնաճյուղն ունի բազմաթիվ ծրագրեր, որոնք կիրականացվեն թիմի կուտակած համատեղ աշխատանքի փորձով և հիմնական նպատակի կարևորության գիտակցմամբ՝ համախմբելով հայ համայնքը մայրենի լեզվի, մշակույթի և հոգևոր արժեքների շուրջ:

Կարինե ԵՍԱՅԱՆ
Կրասնոդարի երկրամասի ՌՀՄ կրթության բաժնի վարիչ, հայոց լեզու և հայրենագիտության ուսուցչուհի, դասագրքերի հեղինակ

«Ես անմահների սերնդին հավերժ կարոտ եմ մնալու»

«Նրանց, ում ես կորցրել եմ, ոչ ոք չի կարող ետ վերադարձնել: Ես անմահների սերնդին հավերժ կարոտ եմ մնալու: Կորցնելու և սգալու երկիր է հայրենիքս... անվերջ մեկին սպասելու կարոտ է հայրենիքս». տողերի հեղինակը ՀՊՄՀ Հոգուստի մոդելավորման բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Մարգարյանն է:

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում կայացավ ուսանողուհու՝ «Ձեռքդ դիր սրտիդ. ես այնտեղ եմ» խորագրով գրքի շնորհանդեսը: Այն տպագրվել էր դեռ 2022-ի տարեվերջին, ինչը, հեղինակի խոսքով, իրականացած երազանքի նման մի բան է իր համար: Շնորհանդեսին ներկա էին պատերազմի մասնակիցներ, զոհված հերոսների ծնողներ, բարեկամներ, դասախոսներ, ուսանողներ:

Միջոցառումը յուրատեսակ ձեռնարկ էր՝ և՛ շնորհանդես, և՛ հարգանքի տուրք՝ զոհվածներին և պատերազմից վերադարձածներին: Եղան ելույթներ, հնչեցին բանաստեղծություններ, երաժշտական կատարումներ. յուրաքանչյուր խոսքում և հնչյունում հայ զինվորն էր, հայրենիքն ու սերը, ինչպես նաև խաղաղություն վաստակելու խոստում:

Ռուզաննա Մարգարյանը 44-օրյա պատերազմից հետո շատ անսպասելի սկսել է գրել՝ թղթին հանձնելով իր ապրումներն ու զգացողությունները, ինչպես նաև մերօրյա հերոսների մասին պատմությունները, որոնք գրի է առել ծնողների, ընտանիքի անդամների հետ հանդիպմանը:

Երկու տարի տևած աշխատանքը ուսանողուհին տպագրել է սեփական միջոցներով՝ իբրև խորհրդանիշ, որ ինքն իր տեղում է՝ իր գործով նպաստելու զինվորների անունների անմահացմանը: Ապագա մոդելավորողը վստահ է՝ նույնիսկ իր մասնագիտությունը կարող է ծառայեցնել հերոսների անուններն անմահացնելուն. արդեն որոշել է՝ հիմնելու և նրանց անունով է կոչելու կենտրոններ, արվեստանոցներ:

Ռուզաննա Մարգարյանը լիահույս է՝ յուրաքանչյուր ընթերցող գուցե գրքի էջերում գտնի այն բացը, որը հենց ինքը պետք է լրացնի իր ամենօրյա գործով. «Սիրելի ընթերցող, հիշիր, որ ՀԱՅ ես. իսկ հայ ծնվում են միայն ուժեղները... հայի ճակատին հավերժ փորագրվեց պայքարը»:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

100-ԱՄՅԱ ԲՈՒՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանը բացման օրվանից ծավալում է բազմաբովանդակ գործունեություն: Կրթամշակութային այս կենտրոնի նպատակն է ներկայացնել բուհի մեկդարյա հարուստ անցյալը և առօրյան: Թանգարանը, հանդիսանալով բուհի կրթական, ճանաչողական և ուսուցողական բաղադրիչ մաս, շարունակում է սիրով ու ջերմությամբ հյուրընկալել տարբեր պահանջմունքներ ունեցող այցելուների:

Համագործակցելով բուհի 10 ֆակուլտետների հետ՝ թանգարանում իրականացվում են մի շարք բովանդակալից ծրագրեր ու միջոցառումներ, նախատեսված տարբեր տարիքի այցելուների համար: Մանկավարժական բուհում սովորող ուսանողներն իրենց ուսումնական պրակտիկաների ընթացքում կազմակերպում են նաև դպրոցականների շրջայցը համալսարանի պատմության թանգարան: Այցելուների մոտ մեծ հետաքրքրություն են առաջացնում ցուցադրված առարկաները, Խաչատուր Աբովյանի 3D անիմացիոն կերպարը: Թանգարանը սովորողներին տրամադրում է նաև նյութեր իր ֆոնդերից՝ ավարտական աշխատանքներ և գիտական հոդվածներ գրելու համար: Թանգարանի էքսկուրսիոն տեքստը հասանելի է նաև լսողության և խոսքի խանգարում ունեցող անձանց համար՝ սուրդոտեքստերի միջոցով, իսկ տեսողական խնդիրներ ունեցող անձինք ծանոթանում են բուհի պատմությանը բրայլյան տարբերակով տպագրված անոտացիոն տեքստերի միջոցով:

Թանգարանում անցկացվող մասնագիտական կողմնորոշման էքսկուրսիայի շնորհիվ հանրապետության տարբեր բնակավայրերում գործող դպրոցների ավագ դասարանների աշակերտները մանկավարժների ուղեկցությամբ այցելում են համալսարան՝ տեղեկանալով համալսարանի բազմաբնույթ մասնագիտությունների վերաբերյալ:

2023 թ. առաջին եռամսյակում արդեն թանգարան է այցելել դպրոցների և կրթական այլ հաստատությունների 968 սովորող: Հյուրընկալել ենք № 197 հիմնական դպրոցի, Հ. Թումանյանի № 32 դպրոցի, Երևանի պետական հումանիտար քոլեջի, Մ. Գալշոյանի անվան № 148 ավագ դպրոցի, Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի սովորողներին: Պրակտիկայի շրջանակներում թանգարան են այցելել ԵՊՀ Արվեստաբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանողները: Յուրաքանչյուր էքսկուրսիայի վերջում այցելուների մեծ մասը թանգարանից դուրս գալուց առաջ իր գոհունակությունն է գրանցում տպավորությունների գրքում:

Կարինե ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ պատմության թանգարանի ֆոնդապահ

Հիշարժան դասեր Մոսկվայի հայկական կիրակնօրյա դպրոցում

Մարտի 19-ին ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի բարձր դասարաններում անցկացվեցին բաց դասեր՝ նվիրված Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի հրատարակման 80-ամյակին (առաջին հրատարակումը եղել է 1943 թվականին) և հայ մեծանուն գեղանկարիչ և գծանկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի «Վարդանանց ճակատամարտ» թեմատիկ գորգանկարի ստեղծման 40-ամյակին (1983 թ.):

Թեմայի շրջանակներում խոսվեց հայ մեծ գրող Դերենիկ Դեմիրճյանի և նրա «Վարդանանք» պատմավեպի, ինչպես նաև 20-րդ դարի հայ կերպարվեստի առանցքային ստեղծագործություններից մեկի՝ հայ մեծանուն գեղանկարիչ և գծանկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի կողմից և Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի աջակցությամբ ստեղծված մոնումենտալ աշխատանքի մասին՝ «Հայոց այբուբեն», «Ավարայրի ճակատամարտ», «Վերածնունդ» (աջ հատվածն ավարտին է հասցրել հայ անվանի նկարիչ, Հայաստանի ժողովրդական նկարիչ Հենրիկ Մամյանը 2000 թվականին):

Այդ օրը դպրոցում հյուրընկալվել էր ՌԴ-ում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար, քաղաքական գտությունների թեկնածու Գեղամ Ադամյանը, ով ևս ներկայացրեց փաստեր հայ ժողովրդի պատմական այս կարևոր էջի վերաբերյալ: Եվ զուր չի, որ հայ ժողովրդի պատմության դժվարին փուլերում ստեղծվեց թե՛ «Վարդանանք»-ը (Հայրենական մեծ պատերազմի տարիներին), թե՛ «Ավարայրի ճակատամարտ»-ը, (կտավը ստեղծվել է դժվարին 90-ականներին)՝ արթնացնելով հայի անկոտրում ոգին:

Ունկնդիրները զանազան հարցեր ուղղեցին բանախոսներին՝ հանգելով այն մտքին, որ սերունդները միշտ հավատարիմ են մնում իրենց լեզվին, գրին, գրականությանն ու հավատքին:

Բաց դասն ավարտվեց դպրոցի սաների գրական-երաժշտական գեղեցիկ կատարումներով և եղիշե պատմիչի թևավոր դարձած արտահայտությամբ՝ «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:

Հատկանշական է, որ դպրոցի կրտսեր դասարաններում նորովի անցկացվեցին բաց դասեր՝ նվիրված «Պոեզիայի համաշխարհային օրվան» (նշվում է մարտի 21-ին): Այս դասերն առավել հատկանշական էին ծնողների համար, ովքեր հնարավորություն ունեցան իրենց զավակների հետ ընթերցելու հայ մեծ բանաստեղծների՝ Հ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի, և Վ. Տերյանի, Պ. Սևակի և Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի և Ն. Զարյանի բանաստեղծությունները՝ նվիրված հայոց լեզվին, հայրենիքին, հայապահպանությանը:

Ծնողների խոսքերով՝ օտար հողում վերարժևորվեցին մեծ վարպետների խոսքերը և հիմա զգում են պատասխանատվության զգացում իրենց զավակների առջև: Ուստի դահլիճում և դասարաններում տիրում էր հուզական մթնոլորտ, մերթընդմերթ՝ խորը լռություն: Լուռ էին նույնիսկ ամենափոքրիկ սաները. երևի թե մտորում էին իրենց մաքուր հոգու ջինջ աշխարհում:

Բաց դասերից հետո ծնողներն իրենց շնորհակալական խոսքը հղեցին դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանին և ուսուցչական համակազմին՝ նշելով նման ձևաչափի կարևորությունը դպրոց-ընտանիք, ուսուցիչ-աշակերտ կապի ամրապնդման ու զարգացման գործում:

«Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց, ՌԴ

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

«ԵՍ ՆԿԱՐԵԼ ԵՄ ՄԻՄԻԱՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Երբեք երազներ ու անիրական բաներ չեմ նկարել, ես նկարել եմ միմիայն իմ իրականությունը»

Ֆրիդա Կալո

50 անուն նկար, երկլեզու ցուցադրություն, շարժվող կտավներ ու բազմամարդ սրահ: Մեքսիկուհի նկարիչ Ֆրիդա Կալոյի աշխատանքները Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում են՝ նոր ու հետաքրքիր լուծումներով:

40 րոպեների ընթացքում տեսագիդի միջոցով ցուցադրությանը ներկա արվեստասերները ծանոթանում են նրա կյանքի դժվար պատմությանն ու ստեղծագործական բուռն ընթացքին:

Մի խումբ նկարիչների, այդ թվում Ֆրիդա Կալոյի համար 20-րդ դարը նշանակալից էր: Կալոն աշխարհին հայտնի է իր հեղափոխական ու յուրօրինակ ինքնանկարներով: Ցավոք, միայն մահից հետո վերջինս գնահատվեց և հռչակ ձեռք բերեց:

Մեքսիկացի նկարչուհու՝ «Երկու Ֆրիդաները» կտավն ամենահայտնի ու քննարկված գործերից է համարվում: Այն կրկնակի ինքնադիմանկար է, որը պատկերում է նստած երկու Կալոներին: Ըստ Կալոյի ընկերոջ՝ Ֆերնանդոյի հուշերի, կտավը ստեղծելիս նկարչուհին ոգեշնչվել է նույն տարի Լուվրում տեսած երկու՝ «Երկու քույրեր» և «Գաբրիել դ'Էստրեն քրոջ հետ» կտավներից: Մեքսիկական արվեստները նշանակալի ազդեցություն են ունեցել նրա ստեղծագործությունների վրա: Ֆրիդա Կալոյի գեղարվեստական ոճը երբեմն նկարագրում են ինչպես պարզամիտ կամ ժողովրդական արվեստ, իսկ սյուրռեալիզմի հիմնադիրներից Անդրե Բրետոնը նրան դասել է սյուրռեալիստների շարքին:

Ֆրիդա Կալոն ամուսնացած էր սիրված ու ճանաչված նկարիչ Դիեգո Ռիվերայի հետ: Ամեն ինչ փոխվեց այն ողբերգությունից հետո, որ ճակատագրական եղավ Ֆրիդայի կյանքում. նա հղիացավ, սակայն առողջական խնդիրների պատճառով կորցրեց երեխային: Այդ ընթացքում էլ նկարեց «Իմ ծնունդը» կտավը, ինչով սկսվեց նրա ստեղծագործական կարիերան:

Ավտովթարը ևս որոշիչ էր վերջինիս համար. Ֆրիդան 35 ծանր վիրահատություն ունեցավ, ինչը վերջնականապես սպանեց Կալոյին: Այդ շրջանում Ֆրիդան ստիպված էր անշարժ պառկել ու մնում էր միայն նկարել: Անկողնու մոտ դրված հայելու միջոցով նա ինքնանկարներ էր անում:

«Ինքս ինձ շատ եմ նկարում, քանի որ միայն ինձ եմ ամենալավը ճանաչում»,-պատճառաբանում էր Կալոն:

«Կոտրված սյուն» կտավը Կալոյի ամենահայտնի գործերից էր, որն առանձնակի հետաքրքրություն էր առաջացնում ներկաների մոտ: Կտավում Կալոյի մերկ մարմինն է՝ մասնատված, ինչն արտացոլում է երկրորդ պլանում պատկերված հողի մասնատվածությունը: Մետաղյա կորսետը նրա հիվանդությունների խորհրդանիշն է, որ սահմանափակել է վերջինիս կյանքը:

Ամուսինը՝ Դիեգոն, 20 տարի մեծ էր Ֆրիդայից, բայց դա չէր խանգարում վերջինիս ամեն հարմար առիթով դավաճանել կողակցին: Չնայած նրան, որ նրանց սերը 20-րդ դարի ամենազգացմունքային ու հայտնի սիրավեպերից էր, զույգի ամուսնությունն ընդհատվեց, երբ Ֆրիդան ամուսնուն ու քրոջը տեսավ նույն անկողնում:

«Իմ կյանքում երկու սարսափելի աղետ է եղել. առաջինը ավտովթարն էր, որ մեկընդմիշտ հաշմանդամ դարձրեց ինձ, երկրորդը՝ Դիեգոն»,- ասում էր նկարչուհին:

Ամուսնալուծությունից հետո, արկածներ փնտրելով, Ֆրիդան սիրելով հանդերձ դավաճանում էր ամուսնուն՝ ինչպես հակառակ, այնպես էլ նույն սեռի հետ: Ֆրիդայի առողջությունը վատթարանում էր տարեցտարի: Նրան տանջում էին մշտական ցավերը:

Կյանքի վերջին օրերին Կալոյին խնամում էր ամուսինը՝ Դիեգոն:

«Ինձ համար եղավ ամենասարսափելին: Ես մեկընդմիշտ կորցրի իմ սիրելի Ֆրիդային: Իմ սերը նրա հանդեպ եղել է ամենահրաշալի բանն իմ կյանքում»,-ասել

է Դիեգո Ռիվերան կնոջ մահից հետո:

Դիեգոյի վերջին ցանկությունը եղել է, որ իր մահից հետո վառեն մարմինը և մոխիրը խառնեն սիրելի կնոջ մոխրի հետ:

Ֆրիդա Կալոն արվեստի պատմության մեջ մնաց որպես հզոր անհատականություն, առանձնակի կերպար, որն ուներ նպատակ, փիլիսոփայություն և ուղղություն:

Ընդհանուր առմամբ Ֆրիդա Կալոն ստեղծել է 143 կտավ, որոնցից 55-ը՝ ինքնանկարներ:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Նկարազարդումների աշխարհում

«Ամեն օր և կյանքի ամեն փուլում պետք է գտնել մի հանգամանք, որով կարելի է առաջնորդվել. վայելել ու հաճույք ստանալ կյանքի ցանկացած փուլից»,- մեզ հետ զրույցում ասում է գրքերի նկարազարդող Նաիրա Թանգամյանը: Նա սովորել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում, այնուհետև դասավանդել հարազատ բուհում, ապա նաև «Փոքրիկ իշխան» կրթահամալիրում:

Նաիրա Թանգամյանն արդեն երկու տարի է, ինչ զբաղվում է գրքերի նկարազարդմամբ: Դրանք անում է երկու եղանակով՝ ձեռքով և համակարգչային ծրագրերի միջոցով: Ձեռքով նկարազարդելու համար նա օգտագործում է ջրաներկ, գունավոր մատիտներ: Նկարազարդումներն արվում են ջրաներկի համար նախատեսված թղթի վրա, հետագայում անցնում համակարգչային մշակում և բերվում են վերջնական տեսքի՝ գրքի մեջ օգտագործվելու համար: Երբեմն էլ այս երկու տեխնիկաները համատեղ է օգտագործում. նկարազարդումների որոշ մասն անում է ձեռքով, որից հետո ներբեռնում համակարգչի մեջ և ավարտին է հասցնում համակարգչային ծրագրի օգնությամբ:

«Այս ոլորտում ոգեշնչման և կատարելագործվելու համար շատ մեծ դեր ունի համաշխարհային մանկական գրականությունը, որն ուսումնասիրելիս առավել մեծ ուշադրություն դարձնում եմ նկարազարդումներին»,- ասում է Նաիրա Թանգամյանը և նկատում՝ մենք էլ ունենք անչափ գեղեցիկ մանկական գրականություն՝ հիասքանչ նկարազարդումներով, որոնցով չոգեշնչվելն ուղղակի անհնար է:

Գրքերի նկարազարդման նախագծերը տարբեր ծավալի են լինում՝ սկսած երկու-երեք նկարից և նկարազարդված էջից մինչև 30-40 էջանոց նկարազարդումներ: Ամենամեծ նախագիծը, որ իրականացրել է, եղել է 90 նկար մեկ նախագծի համար: «Մեկ գրքի նկարազարդման համար պահանջվող ժամանակը կախված է նրանից, թե այն ինչ տեխնիկայով է արվում և ինչքան ծանրաբեռնված են նկարները. որքան խիտ է լինում իլյուստրացիան և որքան շատ փոփոխություններ են լինում նկարների վրա՝ այնքան բարդ»:

Մինչև նկարազարդման աշխատանքները սկսելը դրանք թեմատիկ առումով համապատասխանեցվում են տվյալ պատմվածքին.«Մենք հանդիպում ենք հեղինակի հետ, քննարկում բոլոր դետալներն ու պատմվածքին համապատասխան նկարազարդման թեման ընտրում»:

Նաիրա Թանգամյանն ունեցել է մի քանի անհատական ցուցահանդես, մասնակցել բազմաթիվ ցուցադրությունների, բայց հիմնականում իր գոբելեն աշխատանքներով. գրքերի նկարազարդումները երբեք չի ցուցադրել:

«Ես ունեմ երկու աշխատանք, որոնք ինձ համար կարևոր են. «Լույսի ճանապարհին» գոբելենն ու դիմանկարների «Եռանկար» շարքը, որն ինձ համար անչափ սիրելի է ու հարազատ. դրանում պատկերված են երեք ռասայի պատկանող կանայք և խորհրդանշում են կրոնական ու ազգային հավասարությունը»,-ներկայացնում է Նաիրա Թանգամյանը:

Նաիրա Թանգամյանն առաջնորդվում է այն գաղափարով, որ ոչինչ հարատև չէ, ամենն անցողիկ է, դժվարին փուլերում պետք է առաջնորդվել գալիք գեղեցիկ օրերի սպասումով: Դժվարություններն այդ ժամանակ հաղթահարելի են. ցանկացած խնդիր մի օր մնում է անցյալում:

Նկարազարդող Նաիրա Թանգամյանը գտնում է, որ կյանքում հաջողելու ամենակարճ ճանապարհը սիրելի գործով զբաղվելն է: Իսկ կերպարվեստի ոլորտում թե՛ սկսնակների, թե՛ փորձառուների համար անչափ կարևոր է շատ աշխատելն ու մշտապես կատարելագործվելը:

Գոհար ԹՈՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ Կուտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

«Ապարանյան ձմեռ-2023»-ը՝ մարզամշակութային յուրատեսակ խաչմերուկ

Ձմեռային կատարյալ հանգստի համար բոլոր նախադրյալներն առկա են՝ արևոտ օր, ձյուն, ուրախ տրամադրություն ու ջերմ մթնոլորտ: «Ապարանյան ձմեռ -2023» մարզամշակութային միջոցառումը Ապարանի համայնքապետարանի ջանքերով անցկացվում է Ապարանից 2 կմ հեռավորության վրա գտնվող 2050-2200 մ բարձրություն ունեցող Խաչասարի հատվածում: Այն ավանդական միջոցառում է, որն անցկացվում է 1970-ական թվականներից:

Միջոցառման սկիզբն ազդարարվեց ջահավառությամբ: Ապարանյան ուրախ տրամադրությունն ապահովված էր խառույկի շուրջ ազգային երգ ու պարով: Ապարանի համայնքները միջոցառմանը մասնակցում են առանձին տաղավարներով, յուրաքանչյուրն իր հետ բերել է հարազատ գյուղին բնորոշ ուտեստները: Ներկայացնում են ճաշատեսակների պատմությունն ու սիրով հյուրասիրում հյուրերին:

Արագած գյուղի սեղանը զարդարված էր յուրահատուկ ճոխությամբ: Տարատեսակ տաղավարների մեջ միակն էր, որ իր հյուրերին ոչ միայն աղանդեր և ճաշեր (թանապուր, օձի թթու, պասուց տոլմա, քրչիկ, հարիսա) էր հյուրասիրում, այլ նաև հնուց եկած ղավուրմա և մարդկանց կողմից շատ սիրված խաշ:

«Բոլոր սեղաններն էլ շքեղ են այսօր, իսկ դա գյուղի միասնական լինելու և պատրաստածի մեջ սեր դնելու արդյունքն է»,-նշեց Արագած գյուղի Արվեստի դպրոցի տնօրեն Աննա Ավդալյանը:

Ծաղկաշեն գյուղի սեղանին բացի ավանդական ուտեստներից կար նաև տարբեր տեսակի կանաչեղեն՝ բանջար, ինչպես իրենք են նշում:

«Բոլորը մենք մեր ձեռքով ենք հավաքել Եղիպատրուշ գյուղի դաշտերից, այնտեղից, որտեղ ներկայումս ճոպանուղին է»,-ասաց Ծաղկաշեն գյուղի դպրոցի պատմության ուսուցչուհի Նաթելա Զաքարյանը:

Ի դեպ, Ծաղկաշենի տաղավարը տարբերվում էր նրանով, որ ցուցադրված էին ոչ միայն կերակրատեսակներ, այլև գիրք՝ Սուրո Գրիգի «Կյանքը մահվանն ընդառաջ»: Հեղինակը նույնպես Ծաղկաշեն գյուղից է, իսկ գիրքը Արցախի 44-օրյա պատերազմի մտորումների, ապրումների մասին է:

Քուչակ և Եղիպատրուշ գյուղերի սեղաններին դրված էր Քուչակի սազանը, որը հենց տեղին է բնորոշ և տեղում էլ պատրաստվում է: Իսկ Եղիպատրուշինը տարբերվում էր գյուղից հավաքած խոտաբույսերով և ցորենից պատրաստվող գրեթե ամեն ինչով:

«Եղիպատրուշ»՝ նշանակում է անհաս ցորեն, բայց դա ներկա պահին այդքան էլ այդպես չէ, որովհետև այն հասունացած է, ու սեղանին դրվածները պատրաստված են ցորենով»,-նշեց Եղիպատրուշ գյուղի միջնակարգ դպրոցի կազմակերպիչ Հայկանուշ Գրիգորյանը:

Ապարանցիների սեղանից անպակաս էր հումորը. ասում, խոսում և պատրաստածը սիրով հյուրասիրում էին հյուրերին:

Փառատոնին իրենց ուտեստները, պարերն ու մշակույթը ներկայացրին եզդիական գյուղերի ներկայացուցիչները, արթիկցիներն ու գավառցիները:

Միջոցառման երկրորդ մասում կազմակերպված տարբեր խաղերին մասնակցում էին ոչ միայն Ապարանի բնակիչներն, այլև մարդիկ, որոնք այստեղ էին ժամանել հատուկ վերջին ձյունը վայելելու, ձմեռային ժամանց ունենալու համար:

«Ապարանյան ձմեռ-2023»-ին մասնակցեցին նաև Մանկավարժական համալսարանի ուսանողները:

Ապարանի համայնքապետարանի կազմակերպած ամենամյա փառատոնին աբովյանականները մասնակցում էին արդեն 2-րդ անգամ: ՀՊՄՀ շուրջ 70 ուսանող մասնակցեց բազկամարտի, հրաձգության, ձնամարտի և դահուկավազքի մրցութային, ինչպես նաև սիրողական մյուս մրցաշարերին:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը նկատում է՝ «Ապարանյան ձմեռ-2023»-ը ՀՊՄՀ ուսանողների այս տարվա արդեն երկրորդ ձմեռային ժամանցն է. երկրորդ կիսամյակից առաջ նրանք իրենց հանգիստն են անցկացրել Աղավնաձորի ուսումնական բազայում:

«Նմանատիպ միջոցառումներն ունեն և՛ ժամանցային, և՛ ուսուցողական նշանակություն: Դա նպաստում է, որ ուսանողները, բացի մասնագիտություն ստանալուց, ունենան նաև հիշարժան ուսանողական տարիներ»,-նշեց Ուսանողական խորհրդի նախագահն ու հավելեց՝ ուսանողական կառույցն անում է հնարավորը, որ ուսանողները մասնակցեն նման տարաբնույթ միջոցառումների:

Ուսանողները միակարծիք են՝ նման ձեռնարկները նպաստում են, որ իրենք ունենան լիարժեք ուսանողական տարիներ, անմոռանալի հույզեր, սպորտային տրամադրություն և մրցութային զգացողություններ: Բացի այդ, նմանատիպ համապետական միջոցառումները նպաստում են այլ բուհերի ուսանողների, երիտասարդների հետ նոր կապեր հաստատելուն:

Միջոցառման մարզական մասը ապահովել էր Ապարանի մարզադպրոցը:

Լիանա Մարգարյանը, որը Երևանից էր եկել, հիացած պատմում է. «Մի քանի տարի է, ինչ լսում եմ «Ապարանյան փառատոն»-ի մասին ու ցանկանում էի ինքս էլ մասնակցել: Այս տարի կարողացա մասնակցել ու հիացած եմ նման հյուրասիրությամբ, այսքան ժամանակ ոչ մի տեղ չէի հանդիպել նման ջերմություն ու հյուրընկալություն»:

Կարծես ամեն ինչ ստացված էր, ջերմ ու ուրախ մթնոլորտ, երբ և՛ կազմակերպիչներն էին գոհ, և՛ հյուրերն՝ ուրախ, բոլորը տպավորված էին ջերմ վերաբերմունքից:

«Ապարանյան ձմեռը» ոչ առաջին անգամ էր և ոչ էլ վերջին, ուղղակի մի քանի տարի չէր ստացվում: Վերջին տարիներին փորձում ենք ամեն գնով գեղեցիկ ավանդույթը վերականգնել»,- մեզ հետ զրույցում ասաց Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, որն ակտիվ մասնակցություն ցուցաբերեց միջոցառմանը:

Վիոլ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՊՄՀ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Կարոտի երգ

Հայրենապապակ չյունե թագուհի,
Մեզ հիացնում ես տեսքով վեհանիստ
Ու քո անթաքույց տխրության միջին
Հույսով սպասում, ժպտում ես հանգիստ:
Արծաթ վարսերը ուսերիդ փռած՝
Մեզ հմայում ես, մեր վեհ դշխուհի,
Ու համբերատար, ձերմակի միջին
Լուռ սպասում ես ավետման լուրին:
Կարոտդ դիզված մռայլ հոնքերիդ,
Հայրենակարոտ աչքով ծվարած,
Քո տառապանքը հովերին տված՝
Զուսպ սպասում ես, իմ սեգ լեռնուհի:
Մտատանջմունքդ անցյալին կտաս,
Եվ հայրենաբաղչ խոհերդ հաստատ հուշեր կդառնան,
Քո քղանցքների սուրբ հողը նորից մերը կդառնա,
Եվ ինչ էլ լինի՝ իմը կդառնաս, իմ լեռ Արարատ:
Միայն կերգես մորմոքն անցյալիդ,
Քո արցունքներից գետեր կհորդեն,
Ու կմաքրվի տառապանք ու քեն,
Պայծառ գալիքիդ երգը կերգենք:

Աննա ԴԱՎԹՅԱՆ
ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, ուսուցչուհի

Մայր իմ

Մա՜յր իմ հոգատար,
Դու իմ սրբություն,
Իմ հպարտություն,
Իմ նեղ օրերի
Միակ փրկություն:
Աշխարհի բոլոր
Ծաղիկները վառ
Ծնվել են սիրով
Միայն քեզ համար:
Դու իմ աննման,
Դու սեր, դու հավատ,
Հույսի մի հյուլե,
Իմ թանկ ու լուսե:

Աննա ՍՄԲԱՏՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 3 -րդ կուրսի ուսանող

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 31.03.2023 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ